




ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 74

21 ԴԵՍԵՄԲԵՐ 1912

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

Տ Պ Ա Ր Ա Ն

"ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ,,Ի

Այսուհետեւ Կաթողիկէ Արձագանգ շաբաթաթերթը լոյս պիտի տեսնէ իրեն տեփական տպարանին մէջ: Տպարանս, զոր բազում գոհողութեամբ կանգնեց Ամենապ. Հոգեւոր Տէր, ըստ բաւականի ճոխ է և որ աւուր միշտ պիտի կատարեւազործուի: Արդէն ի վիճակի է որ և իցէ տպագրական գործոց համար թէ՛ ի Կ. Պոլիս և թէ՛ գաւառներէ գիւմդները գոհացնելու:

Կը տպուին ամէն տեսակ ժամոցնումի, գիրքեր, տետրներ, հրաշխագիրներ, քարտեր, քարտ-տետրներ, մահազոյներ ևն., ևն., Գիները անմեղքելի կերպով աժան են:

Գեղեցկագիտական ճաշակի և տպագրական մաքրութեան հոգմանէ ևս յաճախորդները անտարակոյս գոհ պիտի մնան:

ՏՊԱՐԱՆ «ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ»Ի
Կ. Պոլիս, Բերս, 5 Պայքաւ փողոց 5

Ընդհանուր Կաթողիկէ Ս. Եկեղեցւոյ, արեւելեան բոլոր Կաթողիկէից եւ վերջապէս Հայ-Կաթողիկէ Պատրիարքեան երեւ-չորրորդին հետ արքայան սօճերու կասարումը համաձայնեցնելու եւ ասանկով ամենախախտելի միօրինակութիւն եւ հոգեւոր միասնութիւն ձեռք բերելու դիտաւորութեամբ, Նոր Տումարը նաեւ 4. Պոլսոյ Աւագ բեւին մէջ հրատարակուած ըրդարով ի պաշտօնէ, անոր վերաբերեալ Պատրիարքական Կոնքալը անցեալ անգամ հրատարակեցիմք թերթիս մէջ: Բայց որովհետեւ դժբախտաբար եւ առանց իրենց յանձնարարի սանկերէն միայն զիցող հաւասարեալք կը խնդրեն որ այս պատճառաւ չգրկուին նաեւ զոնէ՝ հոգեւոր պատգեւեր, եւ քե միակ Կաթողիկէ այս թերթը ձեռնառն եւ հրահրից ըրդար նաեւ իրենց հաւաստին եւ յուսաւորութեան, հերեւաբար պիտի աշխատենք մանաւանդ այստեղէն՝ որ թերթիս ծաւալը պիտի ընդարձակի, այս յոյժ օրինաւոր պահանջին զոհացում տալ, որով եւ վերոյիշեալ կարի հրահանգից ու շինից Կոնքալին՝ սանկերէն քաղ- մանութիւնը կը արկին ներկայացնէջ այս եւ հետեւեալ թիւով:



ԲՕՄԱ ՔԻԼԻՍԷԻ ՇԵՐԻՖԻՆՏԷՆ ԹԱՍՏԻԳ ՕԼՈՒՆՄԸՇ ՕԼԱՆ
ԷՐՄԷՆԻ ԳԱԹՕԼԻԳ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ
ԿԻԼԻԿԻԱ ՊԱՏՐԻԱՐԷԸ
ՅԻՍՈՍ ՔՐԻՍՏՈՍՈՒՆ ԳՈՒԼԸ
ՕՆ ԻԻԶԻԻՆՃԻԻ ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ

Բէտուլանէ պիր դայրէքլէ մուավինլէրիմիզ օլան,
սէվկիւլիւ էվլասլարըմըզ Աւագ թեմիմիզին ճագ.
Ժողովրդապետլէրինէ վէ միւհթէրէմ վարդապետլէրինէ սէլամ
վէ թեպէրրիւքեաքը բուհանիյէ

Մռազգէզ էվլասլար,

Գաթօլիք սրնփը բուհանիսինին քէնտի մուգատաէս մէսլէքինէ աիտ
օլան վազքիֆէլէրին իճրասընտան մատա, թարզը թէֆէքքիւր վէ թէա-
միւլիւնտէ իպրազ էտէճէյի եէկնէսագլըզ (միօրինակութիւն) սայէսինաէ
տաիսի կէրէք ճանլարա, կէրէքսէ քէնտի քիլիսասընա ֆայիտէլի օլա-
ճազը հէր քէսճէ մալիւմ վէ միւսէլլէմ տիր: Չիւնքի Բիլիսայը շէրի-
ֆին ֆիքրինէ միւթապըզ օլան պիր եէկնէսագլըզ, ճանլարըն սէլամէ-
թինէ վէ պիր ճէմաաթըն մաքտի վէ մանէվի թէրազըրընա չալըշան
բուհպանը առաւա զավի բապըթալարլա բապթ էտէր: Ատէթլէրճէ, էֆ-

քեար վէ գանաաթճա եկտիկէրիմիդտէն նէ գատար ֆարգլը վէ այրը օլաճագ օլուրսագ, քէնտի արամըգտա տախի օ գատար այրըմը օլուրուզ վէ զաիֆլէնիւրիզ, պինսէն ալէյի, նէ ճանլարն սէլամէլէինէ, նէ Ս. Բիլիսայա, նէ տէ ճէմաաթըմըլըն թէֆէլիւզիւնէ խալըրը օլամալը: Եէկնէսագլըզ, իլէրի կիթմէք իլիւն վասըթալար թէհէյէ էտէր վէ հէր տիւրիւ թէշէպիւսլէրի թէսհիլ էյլէր:

Պիզիւք քիւշիւք էրմէնի Գաթօլիք ճէմաաթըմըլը արասընտա կէրէք րուհանի վէ կէրէք ինթիզամա տաիւր ուսուլ վէ ատաթ հագընտա տիւշիւնմէք վէ օնա կէօրէ տէ ամիլ օլմագ խուսուսընտա օ գատար ինթիլաֆլար մէվճուտ տըր քի պուշլար եէկնէսագլըզը ատթթա միւմքիւսիզ պիւր հալէ կէթիւրիյօրլար: Պու միւնասիպէթսիզլիքլէրին էն չիւքին վէ էն պաշլըճալարընտան պիւրի տէ թարիլիէր (Տոմար) արասընտաքի ֆարգ տըր: Պու կիւն եիւզ երմի պինտէն գիյատէ էրմէնի Գաթօլիքլէրին զըսմը ազամը քէնտի եօրթու վէ սայիլէլէրինի ալաֆրանկա թարիւ իւզրէ իճրա էթմէքտէ տիրէր: Հալպու քի պիւր ճիւզի զըսմը իսէ, քէնտի տիկէր գարտաշլարընտան, մէզհէպտաշլարընտան այրը օլարագ, սայլի ֆարգլը պիւր ճէմաաթ էֆրատը իմիշ կիպի, քէնտի մէզհէպլէրինին էն մուգատտէն վէ էն էսասի խաթըրէլէրինի իճրա էտիյօրլար, մէսէլա պիւր զըսմընը Չատիկ մէսէրէթլէրիլէ մէսըլը օլտուղը վագըթ, տիկէր զըսմը Մեծ-Պահըն հիւզնէնկիզ արարդութիւնլարըլա մէշղուլ պուլոնուլօր:

Նուիրապետութիւնըմըլը թէշքիլ էյլէյէն օն ալթը թէմէրիմիդտէն օն պիւրի, եանի Իսքէնտէրիլէ, Էնքպրէ, Ատանա, Հալէպ, Մարնա, Մարսիւրն, Մալաթիա, Պրուսա, Սիվազ-Թօզատ, Տիյարպէքիւր վէ Մամուրէթ իւլ Ազիզ, պուշլար իլէ պէրապէր եէտի կաթիղիկտապիւն փոխմուրըլըզ խտարէլէրի, եանի Պաղտատ, Շամ, Երուսաղէմ, Իզմիր, Չամսու, Պէյըրթ վէ Տէր-էզ-Չօր եէնի տոմար թութարլար, վէ միւթէպագի պէշ թէմ էանի Տէրսաատէթ, Էրզրում, Տրապիզօն, Մուշ վէ Գայտէրի էսիկ տոմար թութարլար: Պունտան գիյատէ չիւքին վէ միւնասիպէթսիզ շէյ թէսավլուր օլունամագ: Աճէպա տիւնեատա պիզտէն մատա, քէնտի րուհանի էյեամը մախպուսէսինի ֆարգլը կիւնլէրտէ իճրա էտէն միւլթէլէթ թարիլիէր գուլլանան քրիսթիան եախօտ քրիսթիան օլմայան պաշգա պիւր միլլէթ, պիւր մէզհէպ տահա վաճ մը: Պիւր ճէմաաթ Բաթրիզինին, Եպիսկոպոսարընըն, քահանայ վէ ճէմաաթընըն րուհանի էյեամը մախուսէլէրինի միւլթէլէթ կիւնլէրտէ իճրա էյլէմէլէրի քապլը մի տիր, Իշթէ պիզիւք էրմէնի Գաթօլիք ճէմաաթըմըլըն հալի պու տըր: Պու պէտպախթ վազիլէթ իլինտէ պուլունան ճէմաաթ տիւնեատա եալընըզ պիզիւզ: Պու նէ գատար միւլէսիֆ վէ անլաշլումագ պիւր միւպաեէնէթ տիր քի Աւագ Թեմէ թապի պուլունան թեմէր ումումի Բիլիսանըն խթիմալ էթտիյի Նղը Տոմարը գուլլանըրլար տա, րուհանի էն-

Թիզամա վէ թէրագղոյա նիւմունէ վէ մէրքեղ օլմասը լաղըմ կէլէն Աւ-
լադ թեմ կէրիտէ գաղաւն , ումումի Բիւլիսա իլէ քէնտի եօրթուլարընը
իճրա էթմէյիպ , էն սօնրա , կիւնլէր վէ հաֆթալար կէչտիքտէն սօնրա
օնլարը պաշլասըն : էյէր օ եօրթուլարըն իքինճի ըստտէտէ տէյիլ , իլլա
պիրինճի օլարագ պիղիմ մէղհէպիմիղին էսասընա թէալլիւզլէրի օլտուզը
տիւշիւնիւլէճէք օլուրսա , պու չիրքինլիլին միւնասիպէթսիղլիյի տահա
վաղիհ սուրէթտէ աշիքեար օլուր : Իշթէ պուհա պինաէն տիր քի սա-
յիրլէր վէ մէղհէպիմիղտէն օլմայանլար պիղիմ մէսլէքիմիղտէ միւպա-
հէնէթ պուլույօրլար :

Պիր քէրրէ նազարըմըղը մէտէնի էվրօփանըն Գաթօլիքլէրինէ չէվի-
րէճէք օլուրսագ , կէօրէճէյիգ քի , օրատա պիլճիւմլէ Գաթօլիքլէր ճէր
հանկի պիր միլլիյէթէ մէնսուպ օլսալար պիլէ , քէնտի պաշլըճա եօր-
եօրթուլարընը այնի կիւնտէ իճրա էտէրլէր : Փազաթ պու գատար ու-
զաղա կիթմէյէ հաճէթ հօգ տըր , պուրատա , պիղիմ մէմլէքէթիմիղտէ
տախի շարգ Գաթօլիքլէրինտէն օլան հէր միլլէթ , մէսէլա , Մարօնլէր
Սիւրեանիլէր , Բիւլտանիլէր , Բոււ Մեքթիթլէր վէ Դըպթիլէր պիղիմ
էթրաֆըմըզտա , պիղիմ հանըմըզտա եէնի տոմարը թութույօրլար : Նի-
չիւն ճէմաաթըմըզ ֆարգլը պիր մէսլէք թութմալը , Շարգ վէ Դարպ Գա-
թօլիքլէրինտէն այրըտըղը քիֆայէթ էթմէյօր իմիշ կիպի , քէնտի արա-
սընտա տախի այրըմալը , գըսմը ազամընըն եէնի տոմար արգասընտան
կիթտիյի հալտէ , տիկէր պիր գըսմը տա էսկի տոմար արգասընտան կիթ-
մէլի : Աճէպա պու գատար գապիհ պիր իսթիլաֆ միւթէմէտտին միլ-
լէթլէր ինտինտէ նէ կիպի պիր սուի թէէսսիր իճրա էթմէքտէ տիր :
Պու հալ հայաթը իճթիմաիյէ իսուսուսընտա աճ ույոունսուզըղլարա մը
սէպէպ օլույօր : Հէլէ մէղհէպ նօղթաի նազարընտան քիւլլիյէն մուզիրը
տիր : Աճէպա Ս . Բիլիսանըն բէյիսի էքրէմի , Բրիսթիան Գաթօլիք ֆա-
միլեալարըն ումումի պապասը օլան Ս . Բարա հաղրէթլէրի արզու էթ-
մէղ մի քի , տիւնեանըն հէր թարաֆընա եայըմըշ օլան քէնտի ֆամիլ-
հաանա այիտ , մուզատտէս վէ ունուտուլմագ խաթըրէլէր օ այիլէնին
հէփ էֆրատը թարաֆընտան այնի կիւնտէ թէգքեար էտիլսինլէր , միւ-
թէնէվվի լիսանլար քէնտի կիւզէլ արարողութիւնլարըլա այնի իման
էսասլարը էթրաֆընտա պիրլէշմիշ օլարագ իճրա էթսինլէր : Պիւթիւն
Գաթօլիքլէր իշուն պէօյիւք պիր շէրէֆ , Փէվզէլատէ պիր ճէսարէթ տէ-
յիլ մի տիր քի քէնտի եանըմագ բէյիսլէրի վէ Յիսուս Բրիստոսըն վէ-
քիլի իլէ պէրապէր եօրթուլարը իճրա էտիյօրլար վէ պու կիպի վէսիլէյի
ճէմիլէ իլէ տէ , օ մուաղզէզ Բէտէրին մուհապէթլէ մէշհուն օլան գալ-
պինին հիսսիյաթլարընա հիստէտար վէ օրատան իզթիթաֆ օլուհան թէ-
պէրիւքեաթը բուհանիյէլէրլէ միւթէնաիմ օլույօրլար : Ճէմաաթըմըզ
Կ-Պատրիարքլարը , Նպիսկոպոսլարը պու գըպթէպաիւն եէկնէսագըղա վէ
օնուն նէթաճիլինտէն օլան բուհանի միւնասէպաթա արզուքէշ օլմաղա

հազար տէյրլէր մի: Մատամքի տիկէր թեմէրին ըռհպանը պռնա միւլէֆֆազ օլմուշլար, աճէպա Աւագ թեմին միւթէալլէմ վէ զայեուր ըռհանիւթի պու եէկնէսաղլըղըն հուտուլի իչուն չալըշմաղա պօրճլու տէյրլէր մի: Ֆիլհագիպա ճէմաաթընը սէվէն պիր եպիսկոպոս վէ եա պիր քանանայ, իճրա էթտիյի Նորհուրդըն թամ օ կիւն իճրա էտիլմիշ օլտուղընա գանի օլուրսա, նէ՛ գատար մէմնուն վէ մէսրուր օլուր, պիլ աքիս օ մուգատտէս կիւնիւթին չօգտան կէչմիշ օլտուղընը վէ քէնտի- նին անճագ պիր ճիւզի գըսմ իլէ միւթէէիւրէն օ եօրթույր իճրա էյլէ- տիյինի պիլէն իչուն պռնտան գիյատէ մէյուս պիր հալ օլամագ: Պուն- տան մատա, շու պէտպախթ էօմր իչինտէ, շու գատար աճը հալաճանք- լար վէ աղըր քէտէրլէր արապընտա պիլգիմ եէկեանէ թէսէլլի պուլտու- ղըմըզ տագիպա, Ս. Պատարագ գուրպանընը սուհտուղըմըզ վագըթ տէ- յիլ մի: Ահ, օ տագիպալար նէ՛ գատար թաթլը, նէ գատար մէսուտ տըրլար: Իշթէ հէր սապահ օ մուգատտէս գուրպան գարչըսընտա պիր- պիւրէրիմիզի, սէվկիւլիւ ճէմաաթըմըզը խաթըրըմըզ կէթիւրտիյիմիզ գէման, շայէտ պիւթիւն պիլգիմ ճէմաաթըմըզըն տա Ս. Բարա հագըթ- լէրիյէ, ումում տիւնեա իւղէրինտէքի Գաթօլիքլէրլէ այնի եօրթույր իճրա էտիյօր, այնի թէֆէքթիւրլէրլէ մէշղուլ պուլունույօր օլտուղընը պիլէճէք օլսաք նէ՛ գատար միւթէսէլլի օլաճաղըզ, վէ ջերմեղանգըղը- մըզ արթաճագ տըր: Իշթէ օ վագըթ ըռհանի չօպանյարըն վէ պիլճիւմէ ըռհպան սընֆընըն գալպլէրինտէն սէմալի պիր թէսիւրլէ տօլու քէլամ- լար գայնայուպ ճէմաաթա խիթապ իտիլէճէքլէրտի, օ մուգատտէս եօր- թուլարըն միւնասիպէթիյէ օ էյեամը միւպարէքէնին լութֆլարընը ճէ- մաաթըմըզ իւղէրինտէ տալթէ էթմէք իչուն հարարէթլի տուալար կէօյ- լէրէ տօղրու եիւքսէլէճէքլէրտի: Պու կիպի պիր եէկնէսաղլըզա ճէ- մաաթըմըզ ըռհանի թարիպտէ նէ՛ գատար թէրագըզ էտէճէք վէ իչի- միգտէ ըռհանի ինթիգամ նէ՛ գատար իլէրի կիտէճէքտի:

Եվվէթ, սէվկիւլի էվլաալար, պու այրըլըզ, պու իթթիւրատըլըզ ըռհանիյէթէն տախի դարարը տըր տէմիշտիք, շունքի պալատէ մէզ- քիւր սէպէպլէրտէն մատա, իէք էյի պիլիւրսինիզ քի, տինտար պիր Գաթօլիք իչուն, ումումի Բիլիսանըն Պաշընտան վէ Գաթօլիք ճէմաաթ- տան այրըլաղազ, օ մուգատտէս կիւնիւթէ մախսուս ըռհանի ֆայիտէ- լէրտէն, Պատարագլարտան, Ս. Ներողութիւնլարտան, վէֆագ վէ պիր- լիք հիսսիյաթլարընտան մահրում օլմագ նէ՛ գատար աղիմ պիր գայիաթ տըր: Իշթէ պռնըն իչուն տըր քի, սահիհ իպատէթքեարըզ ճէմաաթը- մըզ արասընտա կիթտիքճէ էքսիլմէքտէ տիր, Գաթօլիքլիյէ խասս օլան էյի ատէթլէր ունուտուլմագտա վէ զայիպ օլմագտա, ասըրըմըզն պօ- գուղըղընա գարչը գօյապիլմէք իչուն լագըմ օլան վասիթալար ա- զալմագտա տըր:

(Տեվամի)

ՄԵԿԵՈՒԹԻՒՆ Ս. ԱԻԵՏԱՐԱՆԻ

ՅԻՍՈՒՍԻ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Բ

1. Մարիամու Կուսին Ս. Յովսեփայ հետ ամուսնութիւնը:

2. Փրկչին յղութիւնը, Ծնունդն ու անուանակոչութիւնը:

(Մատթ. Ա. — 18—25)

18. Ու Յիսուսի Քրիստոսի ծնունդն այսպէս էր: Մարիամ անոր մայրը Յովսեփայ հետ նշանուած ըլլալով, զիս իրարու տոյ յեկած, Հոգին Սուրբէն յղացած գտնուեցաւ: 19. Ան Յովսեփի՝ անոր երկը, արդար մարդ մը ըլլալով ու յուզելով զանի խայտառակել, խորհեցաւ զանի գաղտնի արձակել: 20. Ու միջն անկիւս մօտին մէջ այս բանս կը դարձնէր, ահա Տիրոջ հրեշտակը յետիւտի մէջ երեւցաւ անոր ու կ'ըսէ. Յովսեփի, որդի՛ Դաւթի, մի՛ վախճաւ տոյդ առնելու Մարիամը, քանի որ կինը, քանզի նա որ ծնած է ի նմա, Հոգին Սուրբէն է: 21. Որդի մը պիտի ծնանի ու անոր անունը Յիսուս պիտի կոչես. որովհետեւ անկիւս պիտի փրկէ իր ժողովուրդը իրենց մեղքերէն: 22. Իսկ այս անկեր եղաւ քոյկս զի կատարուի ինչ որ ըսաւ Տէրը, Եսայի՛ Մարգարէին միջոցաւ: 23. Ահա՛ Կոյսը պիտի յղանայ եւ պիտի ծնանի որդի մը, ու անոր անունը պիտի կոչեն Էմանուէլ, որ կը բարգձանուի, Աստուած մեզի հետ: 24. Ու Յովսեփի արթննալով ինկն, ըրաւ ինկպէս հրաւայեց անոր Տիրոջ հրեշտակը. եւ իր տոյ առաւ իր կինը: 25. Ու իր գիտէր զանի միջեւ որ ծնաւ իր անդրանիկ որդին ու անոր անունը դրաւ Յիսուս:

Ա. 4. Պարզ և համառօտ, սակայն բացառիկ ոճով մը ընթերցողին ուշադրութիւնը կը գրաւէ Աւետարանիչը, Յիսուսի սքանչելի մարդեղութիւնը և ծնունդը պատմելու սկսելով. «Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս». բացառապէս յոյս տալ կ'ուզէ թէ Յիսուսի Քրիստոսի ծնունդը բոլորովին տարբեր է անոնցմէ, որոնց ծը-ր նընդարանութեան բնական շարքը հեռած էր, միայն ծնաւ բառը կրկնելով. Յիսուսի ծնունդը գերբնական էր և հրաշալի: «Տես՛ր, զիարդ զարթոյց զլուռն, ուպէս զի նոյնն անկող իցէ. քանզի մեծ իմն է Կենդանի եւ հառնելը» (Ոսկ. Ճ. Դ.): Եւ սակայն այսչափ սքանչելեաց մէջ, այսքան պարզութիւն՝ ճշմարտութեան դրոշմն է. Լոկ մարդ են անոնք որոնց պերճ ոճերով կը պաշտօնաւ աշխարհ զալը:

2. Եւ որովհետեւ բնական ծնունդին պատճառ հայր մը չունի Յիսուս, ուստի Աւետարանիչը անմիջապէս կը յիշէ անոր մայրը. «Ձմայր նորա Մարիամ»: Այս սրբազնաստուրք անունը (Եբր. Մէրեմ), թէ և անհարազատ, այլ առ բարեպաշտութեան գեղեցիկ իմաստներով մեկնած են Ս. Վարդապետք, ինչպէս «Աստղ ծովու», ևն. Բուն

խմատը կ'երեւի ըլլալ՝ «Տիրել, զօրանալ»։ Եւ կոյս էր այս մայրը (Հմր. 16) և կուտու-
թեամբը արժանացաւ Աստուծոյ մայր ըլլալու, կ'ըսեն Ս. Հարք։ Ինչպէս կը տեսնուի
Ս. Գրոց ամրողը ընթացքէն, Մարիամ՝ ամենամաքուր արարած, զոր Աստուած իր
Որդւոյն արժանաւոր ընտելարան պատրաստելու համար ի սկզբանէ անհուն սիրով
նախասահմանեց, սկզբնական արտաւերն ու ամենափոքր իսկ անկատարութենէ զերծ
պահեց, Մարիամ միայն միշտ կոյս, իր գաւազը ծնանելէն առաջ, ծնած պահուն եւ
ծնանելէն վերջը, եւ Ս. Եկեղեցին իր ժողովքներով ու վճիռներով անէծք կարդաց
այն ամբարիտներուն դէմ, որ երբէք յանդգնին ուրանալ այս սրբանուէր ճշմարտու-
թիւնը։ Եւ նա ճշմարտապէս ՄԱՅՐ եղաւ Յիսուսի, որ ծնաւ անկէ (Հմր. 16), եւ
հետեւաբար Աստուծամայր եղաւ, զի մայր եղաւ այն մարդուն որ Աստուած է։ Ո՛վ
անիմանալի արժանապատուութիւն Կուսին Մարիամու, որոյ սուրբ արիւնէն ու մար-
մինէն կազմուեցաւ Փրկչին մերոյ Աստուծոյ սրբազնասուրբ մարդկութիւնը որ յաւի-
տնական հաճոյքն է Աստուծոյ և հրեշտակաց ու սրբոց երանութիւնը։ մայր, որուն
հազարանգեցաւ Արարիչն երկնից ու երկրի, և զոր սիրեց ու պատուեց՝ իրր գաւազ
պարտաճանաչ։ «Երկուսեք զարմանի ու երկուսեք սխալանի։ Ստուած կնոջ մը կը հալա-
սակի, խոնարհութիւն անմահ։ Աստուծոյ փայ կ'իջիտ կին մը, բարձրութիւն անհաւա-
սանի» (Ս. Բեռն.)։ Ս. Թովմաս կ'ըսէ թէ Աստուած մեծագոյն գործ մը չկրնար ար-
դիւնաւորել, քան Աստուածամայրութիւնը, որով Մարիամ ստացաւ շնորհք և ձիրք
անհավեմասարար գեր ի վերոյ քան ամէն հրեշտակներ ու սուրբեր. ու կարգուեցաւ
մայր մարդկութեան, Թագուհի և Տիրուհի երկնի և երկրի. «Բանն մարմին եղել, զի
զմեզ որդիս Ստուծոյ արացտ» (Ս. Օգ.)։— «Ծնաւ յերկրի, զի մարդ ծնցի յերկինս» (Ս. Գր.)։

3. Աւետարանիչը բացայայտ կը ցուցնէ թէ Կոյս Մարիամ ճշմարտ ամուս-
նութեամբ ամուսնացաւ Յովսէփայ հետ, կոչելով զանի՝ «ԱՅՐՆ Մարեմայ» Հմր. քիչ
վարը՝ «Մի երկնիքի առնուլ զՄարիամ Կիս Բո»։ «Սու յիմնն զկինն իւր»։ Ինչո՞ւ ուրեմն
ուզեց Աստուածորդին ծնանիլ Կոյսէ մը որ իրօք ամուսնացած էր, թէեւ միշտ անա-
րատ, անմարմնացել։ Ս. Հարք այլեւայլ պատճառներ կը բերեն։ 1. Եթէ Մարիամ
չամուսնացած ծնանէր, Հրէայք զինքը անպատճառ շնացող պիտի կոչէին. Յիսուս գե-
րազասեց որդի Յովսէփայ բութիլ, քան որդի անմաքուր մօր մը։ «Աւելի ուզեց ա՛ր ո-
մանք տարախուէին իր կուսական ծննդեան փայ, քան իր մօր պարկեշտութեան փայ-
նէ ցուզեց իր ծննդեան հաւաստի իր մօր անպատճառութեամբը կազմել» (Ս. Ամբ.)։— 2.
Նոյն իսկ Յիսուս զոր իբր «որդի հիւսանն» արհամարհեցին, որպիսի անարդունաց ա-
ռարկայ պիտի դառնար խոտապարանոց Հրէից՝ իբր անհարազատ գաւազ, որ երբեք
պիտի չկարենար նկատուիլ իբր Մեսիա։ 3. Պահապան մը պէտք էր կուսի, և Մարիա-
մու հաւատարիմ պաշտպան մը, անխնայ օգնական մը, սրբասէր ընտանիքի հաջր մը.
ահա Յովսէփ, լուռ ու խոնարհ, կ'երթայ մարդահամարի Աստուածամօր հետ, ի փա-
խուստ կը շտապէ յեգիպտոս, փրկելու համար Փրկիչը. ի Նազարէթ կը հաստատուի իւր
սիրանունիչ ընտանիքը։ Նա՛ է որ տառապելով ի խնդիր կ'ելլէ Կորնանայ Յիսուսի։—
4. Բայց Յովսէփայ ամենակարեւոր պաշտօնն էր վկայ ըլլալ Մարիամու տնտէս կու-
սութեան. նա այս բանին մէջ աւելի արժանահաւատ եղաւ քան ու է ուրիշ մէկը,
քանզի անոր փեսան էր ու պահապանը, որ պէտք էր գիտնալ խնդիրը ու կրնար. եւ
իբրեւ փեսայ՝ պիտի օտարակուսէր անմեղէն, քան թէ պաշտպանէր յոնցուորր։ Ս.
Բեռն. զՍ. Յովսէփ կը նմանեցունէ Թովմաս առաքելային ու կ'ըսէ. «Որդւոյն յարու-
բեանք աւելի քիւրաւ կը հաւատամ երբ կը հաստատէ զայն Թովմաս ա՛ր տարախուսեցաւ

բան կեփաւ որ լսեց ու հաւատաց. եւ մօր զգասուքեանը մասին աւելի հաւատ կ'ըն-
ծայեմ փեսային որ պահպանեց ու փորձեց, բան թէ մինակ կուսին անձնապատկանու-
թեան: Եւ Ա. Յովհ. Ոսկ. կ'ըսէ. Աւետարանիչն «Էած ի մէջ զՅովսէփ, թէ որովք կրեաց
զվիճսն, նպաստ եղեւ ի հաւատս բանիցն ասացելոց. զի եթէ ինձ՝ ասէ, չաւատս, զոնէ
առնն հաւատա՞» — 5. Մատուցոյ ռիւերիմ թշնամին՝ սատանայ, ամօթ ապարտ պէտք
էր մնար աստուածային ամուլին Մարիամու ու Յովսէփայ վսեմական առաքինութե-
նէն և ահաբեկ ըլլար Քրիստոսի կուսական ծննդենէն որ անոր ծածկուեցաւ աստ-
ուածային նախանամ տեսութեամբ, ինչպէս կ'ըսեն Ս. Հարք. «Զի ծնունդ նորա
ծածկեցի ի սասանայէ, մինչ կարծէ զնա ոչ ի կուսէ այլ ի կնոջէ ծնեալ» (Ս. Իգն. Մար-
տիրոս): — 6. Ս. Թովմաս (Գ. Մ. Խ. 21, յ. 2. 1.), ուրիշ պատճառ մըն ալ կ'ա-
ռաջարկէ. քանզի յանձին Ս. Կուսին Մարիամու պատուական եղաւ թէ՛ կուսութիւն
անրիժ և թէ՛ ամուսնութեան սուրբ խորհուրդը, օրինակ հաւատացելոց՝ կուսանաց և
ամուսնացելոց, և փաստ ջախջախիչ ընդդէմ՝ հերետիկոսաց որ կամ մին կամ զմիւսն
կը պախարակեն:

Ուստի կատարեալ ամուսնութիւն տեղի ունեցաւ ընդ մէջ Մարիամու և Յով-
սէփայ, ամուսնութիւն զոր կը կազմէ ոչ զուգութիւն, այլ հաւանութիւն, ըստ իրա-
ւաբանից: «Բարին հաբսանեաց կատարեցաւ ի ծնողսն Քրիստոսի, զաւակ կուսածին՝
Տէր Յիսուս, և հաւատարմութիւն և խորհուրդ» (Ս. Օգոս.): Սակայն երկուստեք
ուխտեալ յաւիտենապէս անաղարտ կուսութիւնը աւելի փառաւորեց այս սուրբ ամ-
ուսնութիւնը:

(Շարունակելի)

Գ. Վ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

ԱՐԳԻԼԵԱԼ ԹԵՐԹԻՆ ԱՆՅԵԴԵԴ ՄԷԿ ՅՈՂՈՒԱԾԸ

(Շար. եւ վերջ)

Բ. Սակայն «Խորհ խորոց կարդան». այս յօդուածագիրը իմաստա-
կութենէ կ'անցնի նաեւ հայհոյութեան և հերետիկոսութեան: Տեսէ՛ք
եւ դատեցէք: Կ'ըսէ.

«Արեւելեան եկեղեցին, եւ կամ աւելի ճշգրտով ըսենք, Հայկական եկեղեցին ար-
ձան չընդունիր, ո'չ Յիսուսին, ո'չ Աստուածամկայ եւ ո'չ ալ սրբոց, եւ եթէ զանոնք պա-
սել ուզէ, անոնց ամբողջութիւնը կը պաշտէ եւ ոչ թէ անոնց միայն սիրտ կամ երկա-
մունքը»:

Մի՛ այսպանէք զմեզ, ո' հաւատացեալք, այս հայհոյական պարբե-
րութիւնը յառաջ բերելնուս համար. ցոյց տալ կ'ուզենք Ձեզ թէ ասոնք
են ահա այն մարդիկը որ ցանգ կը յեղյեղեն թէ ճշմարիտ կաթողիկէ
են, սակայն հետեւելով Ս. Բազանայապետին հրամանաց, այսպէս յան-
դուսն կը գործեն, և զեռ կը յանդգնին Հայ-Կաթողիկէ հասարակու-
թիւնը կառավարելու ձեւեր առնուլ: «Ոչ ամենեքեան որ յիսրայէլէն են
նոքա իսրայէլեանք իցեն. եւ ո'չ որ զաւակն Աբրահամու են, ամենեքեան
որդիք իցեն» (Հռոմ. Թ. 6, 7): Մատչինք ի քննութիւն:

1. Արեւելեան եկեղեցի, հայկական եկեղեցի, չընդունիր, եւն. ըսելով, յօդուածագիրը՝ արեւելքը կը դիմադրէ արեւմուտքի, այսինքն՝ Հռովմէական եկեղեցւոյն. եւ արեւելքի կը վերագրէ ընդունելու կամ չընդունելու, ինքնիշխան դատելու եւ կարգադրելու իրաւունքը, հետեւաբար եւ անկախութիւն. եւ ահա անմիջապէս հերձուածը. եւ ըստ հետեւորդի հերետիկոսութիւնն եւս, անոր համար որ Հռովմայ գերիշխանութիւնը եւ գլխաւորութիւնը կ'արհամարհէ. վասն զի անոր ընդունած եւ գործածած մէկ բանը Արեւելեան եկեղեցին իրրեւ թէ յիշաւանց կրնայ եղեր չընդունիլ. Իսկ ճշմարիտ կաթողիկէ մը, ըլլայ Հայ, Յոյն, Սկիւթացի, Ճննացի, պէտք է ընդունի իրրեւ ուղիղ այն ամեն բան զոր Առաքելական Ս. Աթոռն Հռոմայ կ'ընդունի. Իսկ ի մասնաւորի հայկական եկեղեցի ըսելով ի՞նչ կ'իմանայ. եթէ Հայ-Կաթողիկէ եկեղեցին կ'իմանայ, զրաւաստակ կ'ըլլայ եւ ծիծաղելի, զի Հայ-Կաթողիկէ եկեղեցին գոյութիւն իսկ չունենար եթէ վայրկեան մը չընդունի ինչ որ Ս. Պետրոսի Աթոռը կ'ընդունի. քանզի զաւանական է այդ. իսկ արդ Հայ-Կ. եկեղեցին բացարձակապէս եւ միշտ կ'ընդունի ինչ որ Հռովմայ Ս. եկեղեցին կ'ընդունի. այս է իր ուղղափառ զաւանութիւնը, միակ ճշմարիտ, որով կը պանծայ. Ուրեմն յօդուածագիրը ուրիշ հայկական եկեղեցիի մը կ'ակնարկէ, իբրեւ հեղինակաւորապէս հակադրելի Հռովմայ Ս. եկեղեցւոյն, բայց ինքն իբրեւ կաթողիկէ չէր կրնար բնաւ եւ ոչ իսկ այսպիսի ենթադրութիւն մը ընել. քանզի 1. Մենք այդպիսի եկեղեցի մը չենք ճանչնար. 2. Եթէ գոյութիւն ալ ունենար, բնաւ հեղինակութիւն չէր կրնար ընենալ, հակառակ Ս. Գահուն Հռոմայ, կամ Պետրոսի Առաքելապետի Աթոռոյն կամ Քրիստոսի իսկ ի գլխովին:

Եթէ կ'ուզէ ակնարկել հայ-էջմիածնական եկեղեցւոյն, անիկա մուրորեալ եւ հաւատոյ ակնադբիւրէն հերձեալ ըլլալով եւ հաւատոյ մասեւրէն քանի մը հասը գոնէ յամառաբար մերժելով եւ առ հասարակ հաւատալեաց մէջ գայթ ի գայթ չեղելով, չէ եւ չի կրնար ըլլալ հայկական ճշմարիտ եկեղեցին, մեզի համար բնաւ նշանակութիւն եւ հեղինակութիւն չունի, եւ չկրնար բնաւ համեմատութեան եզր համարուիլ. եւ մեր ծէսն եւ արարողութիւնք ո՛չ թէ անոր համար հայկական են՝ որովհետեւ էջմիածնականին նման են, այլ անո՛ր համար որ մեր ճշմարտապէս կաթողիկէ Հայրերէն կուգայ մեզ, որոնք ճանչցած ըլլալով զՀռոմ իբր վէմ անյաղթ եւ վարդապետ տիեզերաց, իրենք ուղղափառ եղած են. եւ այս ուղղափառութիւնը չունի այսօր էջմիածին. ոյր վասն մեզի համար հայկական եկեղեցի չէ, եթէ ոչ իբրեւ պիտակ անուն:

Ուրեմն այդ յօդուածագիրը կամ ոչինչ ըսած կ'ըլլայ կամ լաւ եւս՝ կ'ըսէ հերետիկոսութիւն:

2. Ի՞նչ է ուրեմն այն զոր չընդունիր եղեր արեւելեան կամ հայկական եկեղեցին... ԱՐՁԱՆ. Ի՞նչ պատճառաւ. արդեօք Բողոքականաց

պէս բարութանք յօդելով թէ կռապաշտութիւնն է. այլ այս խնչպէս
կարելի է, մինչդեռ արեւելեան ո եւ է եկեղեցի կ'ընդունի պատկերը,
ընդդէմ պատկերամարտի. պատկեր կամ արձան՝ բնաւ տարբերութիւն
չունի, քրիստոնեայ առումով. քանզի լաթի կամ թուղթի վրայ նկար,
եւ կամ քարի, պղնձի կամ գոճի վրայ քանդակ միեւնոյն բանն է.
ամէնքն ալ կը յիշեցնեն այն անձը, որ միայն առարկայ է պաշտօնի.
եւ իրենց նիւթը չէ որ կը պաշտուի. խնչպէս երբ հպատակ մը կը պատ-
ւէ իր վեհապետին պատկերը կամ արձանը, խնչպէս մայր մը որ կը
համբուրէ իր որդւոյն լուսանկարը կամ կիսանդրին: Մեր ամենափոքր
մանկտին իսկ գիտեն այս տարրական ճշմարտութիւնը: Միթէ Պաշկու-
թիւնն ալ արձան չէ...: Ուրեմն արձան չընդունողն ուոյնքան պատկե-
րամարտ հերետիկոս պէտք է համարուի, լազմիցս դատապարտած ի
Ս. Ժողովոյ: Եթէ յօդուածագիրը պատկերամարտ է, խնչպէս կ'երեւի,
ուրեմն հերետիկոս է նաեւ յայտմ գլխոյ:

3. Ի՞նչ կը նշանակէ այն իւր ոճը՝ «Եւ երբ զանոնք ՊԱՇՏՅՆԼ ուզե».
պաշտել՝ արձանը. իսկ արձանը իբրեւ ցիւք չէ որ կը պաշտուի: ու-
րեմն անոնց յիշեցուցած անձը կ'ուզէ ըսել, այս է Յիսուսը, Աստուա-
ծածինը, Սուրբերը: Բայց ան ատեն խնչպէս կ'ըլլայ որ քեական է նա-
խադասութիւնը, Եթէ պաշտել ուզե. ուրեմն կ'ուզէ կը պաշտէ, կ'ուզէ
չպաշտեր զՅիսուս, եւն: Մոլորութիւն՝ ցաւալի, ծաղրելի, տխմարա-
կան:

4. Այլ դեռ հայհոյութիւնը կայ. կ'ըսէ. «Երբ զանոնք պաշտել ուզե,
անոնց ամբողջութիւնը կը պաշտէ, եւ ոչ քե անոնց միայն սիրքը կամ
ԵՐԻԿԱՄԱԻՆԻՔ»: Այսքան ծանր հաւատալիքի խնդիրներուն մէջ այս-
պիսի դժոխային ծաղրանք մը Վսլթէրի հատորներէն սորվուած է նա-
չուչը, եւ վա՛հ որ կաթողիկէ կարծուող թերթ մը կրցեր է զայն տպել.
ամբթ նախատանայ. Պղծութիւն աւերածին: Ո՞վ կաթողիկէ հաւատա-
ցեալ Ժողովուրդ, կը տեսնէ՞ հիմա այն յաւակնոտ եւ ամբարտաւան
եւ անխիղճ մարդիկը, որոնք պոռոտախօս մեծաբանութեամբ գիրենք
կաթողիկէ քարոզեցին. մոլորութիւններ՝ կանոնագրի ծրագրին մէջ:
մոլորութիւններ՝ իշխանութեան դէմ, մոլորութիւններ՝ եկեղեցւոյ մէջ
իշխելու, եւ մոլորութիւններ՝ հերձուածողութեամբ, լիրբ երգիծանքնե-
րով սրբութեանց եւ անպատկառ հերետիկոսութեամբ. «Ժպիրհի, լան-
դգունի, չզանգիսեն զփառս հայհոյել», «Որոց չեցն գիտակ, հայհոյեն յապա-
կանութեան իւրեանց... մանկունք անիծից» (Բ. Պետրոս Բ.)

5. Ահա ասոնք որ կաթողիկէի հոգի չունին, այն հերձուածող եւ
հերետիկոս եկեղեցիներուն հետ՝ որոնց պաշտպան կը կանգնին, արժանի
չեն այն հիանալի, միաթարական եւ աստուածային ջերմեռանդութեան,
որ կ'անուանի Սրբազան Սիր Յիսուսի: Նախ ժպիրհ յօդուածագրին
թանձր տգիտութիւնը պէտք է լուսաւորուի աստուածաբանութեան այն

ակզրուքով, որ Յիսուսի վրայ ամենայն ինչ նաեւ զօտ զատ առնուած, պաշտելի է նստուածային երկրպագութեամբ, Բանին Աստուծոյ անձնաւորական միութեան պատճառաւ։ Անոր համար է որ նորա աստուածային քաւիչ Արեան մի կաթիլը կը բաւէր տիեզերքներ փրկելու։ անոր համար է որ նորա մեռած մարմինն ալ երկրպագելի էր նոյնքան, զի Բանի միաւորութեանը մէջ էր շարունակ։ անոր համար է որ անոր Ս. Խաչն ալ երկրպագելի է, զի սերտիւ միացաւ անոր, եւ անոր Ս. Սրբամբ ողողեցաւ։ Եւ ահա այս պատճառաւ է որ Ս. Դաստառակը առանձին պատիւներու առարկայ եղած է Եկեղեցւոյ մէջ, եւ Եկեղեցին սրբոց նշխարներն իսկ պատուելն վերջը, ինչպէս չափով պատուէ անոնց Տիրոջ Ս. Մարմնոյն մասերը խոնարհական երկրպագութեամբ, մանաւանդ այն Ամենասուրբ Սիրտը որ կեդրոն եղաւ աստուածային տիրոջ բոցին, որ խոցեցաւ տիպաւ եւ բղխեց անտի արիւն եւ Զուր, կենաց կայլակը։ այն Սիրտը որուն վէրքին մէջ Բրիստոսի յարուցելոյ հրամանաւ երանելին Թովմաս միսեց իր ձեռքը եւ սիրով շանթանար, աղաղակեց. «Տէ՛ր իմ եւ Աստուած իմ» (Յովհ. Ի.)։ այն սրբազան Սիրտը վերջապէս, զոր ինքն իսկ Յիսուս, մեր Տէրն, օրինակ ցոյց տուաւ մեզ բնելով. «Ուսարու՛ք յիմէն զի հեզ եմ եւ խոնարհ ՍՐՏԻԻ» (Մատթ. ԺԱ. 29)։ Ո՛հ, որքան անհունապէս անձուկ է յօդուածի մը սահմանը այն անսահման սիրոյ կայանը սրտին հիանալիքը պատմելու։ Հարաւ ինքնահաւաններուն ծածկուած են այս Ս. Խորհուրդներ. «Ծածկեցե՛ր զայն յիմաստեց» որոնք «Ձանձիմս առ իմաստեց ունեին՝ յիմարեցան», այլ «Յայնեցե՛ր տղայոց»։ խոնարհամիտ հնազանդ հաւատացեալներու։

Եւ այդ դժբաղդ յօդուածը, եւ այդ չարաբանտիկ թերթը ժպրհեցաւ հայհոյել զայն, Տէր Աստուած... «Մարդ բարի՝ ի բարի գանձուց սրտի իւրոյ բղխէ զբարիս. եւ մարդ չար՝ ի չարեմ բղխէ զչար» (Ղուկ. Զ. 45)։

6. Ի բաց թողլով դարերու չրջանին մէջ Եկեղեցւոյ Ս. Հայրերուն թանկագին անհատնում վկայութիւններն ի մասին Ս. Սրտին Յիսուսի, վասն իմը ՀՐԴՈՅՆ «Որ ծածկեայն եր ի յաւիտեանցն եւ յազգաց, որ այժմ յայնեցաւ սրբոց իւրոց» (Կող. Ա. 26), պէտք է որ յիշենք նոյն ինքն Յիսուսի երեւումն առ Մարգարիտա-Մարիամ Ալագօզ՝ նախակա կոյսն ի Բարէ-լը-Մօնիալ Գաղղիոյ, յեօթնհետամներորդ դարու։ Յիսուսի այս երեւումը եկեղեցական մանրագնին քննութեամբ հաստատուելով, այդ կոյսն ալ սրբացուեցաւ եւ արժանացաւ խորաններուն պատուոյն բարձրանալու։ Յիսուս ցոյց տուաւ անոր իր օրհնեալ Ս. Սիրտը, պատած փշեայ պսակով եւ բացարձակ հաստատեց թէ այս Զերմեռանդութիւնը իւրեն ամենահաճելի էր, քանի որ կը յիշեցնէր իւր աստուածային անհուն սէրն առ մարդիկ եւ մեծամեծ եւ ցանկալի խոստումներ բրաւ նշանոց որ այս Զերմեռանդութիւնը պիտի մշակեն, որոնց վրայ հոս խօսելը տեղը չէ։ Կը հաւատամ, ո՛վ յօդուածագիր անխորհուրդ եւ յանդուգն,

կը հաւատամ որ Յիսուս, Տէրն փառաց եւ սքանչելեաց, յետ իւր Ս. Յարութեան երեւցաւ իր Առաքելոցը, դօքս փակելովք, եւ հոն աստուածաբար կանչեց զԹովմաս եւ ըսաւ անոր. «Բե՛ր ԶԵՌՔԴԵՆ եւ միտք իմ կողիս ՄԵՋԸ». տե՛ս որչա՛փ մեծ էր այդ սրբազան վէրքը, մինչեւ իսկ ձեռք մը կը մոնէր եւ կը մխուէր մինչեւ ներսը, ի սրբավայրն սիրոյ, մինչեւ սրբազնասուրբ Սիրքը. կը հաւատամ աս ամէնուն... կը յուսամ թէ կը հաւատաս, վախճալով Քրիստոսի ան խօսքէն զոր յարեց. «Ու մի՛ ըլլաւ անհաւատ, այլ հաւատացեալ». եթէ չհաւատաս, կ'ըլլաս աստուածամարտ: «Որ ոչ հաւատայ Որդւոյն Աստուծոյ, սոս առնէ զնա, քանզի չհաւատաց վկայութեանն զոր վկայեաց Աստուած» (Ա. Յովհ. Ե. 10): Արդ ուրեմն զու, այդ մահկանացու եւ ոչինչ՝ առաջի Ամենակալին, զու ո՞վ կ'ըլլաս որ Քրիստոսի Տեառն մերոյ ուղած ատենը իր սուրբերուն երեւցաւ, եւ իր ուղած կերպով յայտնութիւններ ընկաւ, եւ իր ուղած ջերմեանդութիւնները յանձնարարելու կարողութիւնը պիտի սահմանափակես կամ պիտի զլանաս իրեն. «Մարդոց մտածումնեցեանն պէս չեն իմ խորհուրդներս, կ'ըսէ Տէր»: «Երանի որոց ոչ իցէ տեսեալ՝ եւ հաւատասցեն» (Յովհ. Ի. 26—29): — Միայն պիտի կարենաս գանդատիլ եւ ըսել թէ ինչո՞ւ այս երկնաւոր յայտնութիւնները Քրիստոս Տէրն «արեւելեան՝ կամ աւելի ճիշդն ըսելու համար, հայկական եկեղեցւոյն» չընէր... Աւա՛ղ աղէտիցս. յիշէ՛, եղբայր, յիշէ՛ որ երկնաւոր հօրմէն կտրուած ուրը չկրնար հիւթ պահել. Կաթողիկէ եկեղեցւոյն չստղը, իրրեւ հեթանոս է եւ իրրեւ զմաքսաւոր. ճշմարիտ կեանք, շնորհք, լոյս, սրբութիւն, սրբացուցում եւ փրկութիւն ճշմարիտ եւ միակ Կաթողիկէ եկեղեցւոյն մէջ է, որ վէմի վրայ հաստատուած է. «Մեք երկիր պապանեմք որում գիտեմք. զի փրկութիւն ի Հրէից է» (Յովհ. Դ. 22): Քաժանոսմ, հերձուած, հերետիկոսութեան, չնորհաց եւ սրբութեան աղբիւրը չորցուցին: «Առ ի մեզ ելին, այլ ոչ էին ի մեզ» (Յովհ. Բ. 19), «Ապստմբեալք ի բանեն յոր եւ եղան» (Պետր. Ե. 8). «Զաստուծայ մերոյ շնորհսն դարձուցին յանկարգութիւն... վա՛յ է նոցա. զի.. ըստ հակառակութեանն Կորնայ կորեան... ամպք անջրդիք. ծառք պտղակորոյսք. անպտուղք, կրկնամեռք, խլեալք արմատաք» (Յուդ. 4, 11, 12): Եւ «Որպէս Յաննան եւ Յամէս հակառակ կացին Մովսիսի, նոյնպէս եւ սոքա հակառակ կան նամարտութեանն.. անպիտանք ի հաւատս. այլ ո՛չ երբեք գայցեն յառաջ ի չաւ անդր». (Բ. Տիմ. Գ. 8. 9):

Արդ, այսպիսի ահաւոր անտարբերութեան եւ անկրօնութեան դարերուն մէջ Ս. Սրտին Յիսուսի այսքան աստուածազգեցիկ ու փրկարար ջերմեանդութիւնը արեւու ճառագայթներուն պէս տարածուեցաւ ընդ համայն աշխարհ, եւ այն օրէն ի վեր երեք հարիւր միլիոն կաթողիկէ եղբք կը պաշտեն, ահիւ եւ սիրով, այս աստուածեղէն Սիրսը: Ո՛չ անօրինաց հայեցանքը, ո՛չ արեւելեան կամ արեւմտեան հերետիկոսու-

թեանց բարուրանքը, ո՛չ ասի մը հերձուածող հայերու զայն անգիտա-
նալը՝ — զի ճշմարտութենէն բաժնուածները շնորհազուրկ եւ առանց
մխիթարութեան են, — եւ ո՛չ անսարքեր կամ անուանական կաթողի-
կէից կրքոտ ուրացումները կրնան երբեք խախտել այդ երկնաւոր եւ
սփոփարար ջերմեռանդութիւնը, զոր Բրիտոս յայտնեց սրբակեաց կուսի
մը, Ուղղափառ ընդհանրական եկեղեցին ընդունեցաւ, Քահանայապետք,
ի մէջ որոց մեծափառն Լեւոն ԺԳ., առանձինն կոնդակներով յանձնա-
բարեցին հաւատացելոց:

Արդ, պէ՛տք է կարկին հայհոյիչ լեզուներ. պէ՛տք է՝ ըմբերանին
պատկերամարտ հերետիկոսներ, հակակաթողիկէ կեղծաւոր ազգայնամու-
տոյորեալներ. պէ՛տք է սթափին ճշմարիտ կաթողիկեայք պաշտպանելու
իրենց նուիրական սրբութիւններն՝ անտարբեր կամ նոյն իսկ անհաւա-
տացող մարդոց եւ թերթերու դէմ, որոնք զիրենք կաթողիկէ կ'անուա-
նեն, եւ չեն, ինչպէս ըսաւ Բրիտոս ի Յայտնութեան.

«Անաւասիկ ես քամ քեզ զժողովն սասանայի, որք ասեն զիմեանս
Հրեայս զալ եւ ոչ են, այլ սսեն (Յայտ. Գ. 9):

Այսպիսիներուն դիտումը ուրիշ բան չէ եթէ ոչ հայ-կաթողիկէու-
թիւնը բաժնել Հոռմէն. եւ որովհետեւ կաթողիկէ մնալով՝ կարելի չէ
այդ, ո՞վ զիտէ դեռ ի՞նչ գաղտնի դիտումներ ունին: Ի՞նչ է դիտումին
երբ կ'արհամարհեն Հոռմայ քահանայական դաստիարակութիւնը ազգա-
մեծս ցոյց տալով գայն, երբ կը կրկնեն կ'երեկնեն թէ հայ եկեղեցին
չտօներ Քաղկեդոնի Ժողովը (նոյն. յօդ.) ... — բայց, անէծք կը կար-
դար Ս. Լեւոնի յիշատակին !!! — Ի՞նչ է ուրեմն դիտումը այս ճշմարիտ
Սուրմակներուն, Բրգիչոններուն, Որոսնեցիներուն ... Գազազ-Ամիրայի
մարգարէութեանց հաւտացողներուն ... (նոյն յօդ.) Ի՞նչ է դիտումին
երբ կ'ըսեն, հակառակ Ս. Աթոռոյ բացայայտ հրամանաց, թէ՛ «կաթո-
ղիկոս մը պէտք է իր նախորդաց իրաւունքները լիովին վայելել. այլազգ
չէ կարելի Ս. Գրիգոր Լուսաւորչայ յաջորդն ըլլալ. այլ անձեւ եւ ան-
կերպարան արարած մը (այսպէս), ՍՏՈՐԱԿԱՐԳԵԱԼ պաշտօնեայ մը,
մինչդեռ «կաթողիկոս բառը յունարէն ածանց մըն է որ տիեզերական
(իշխանութիւն) կը նշանակէ»: Ի՞նչ են թաքուն դիտումներն այս թե-
լադրութեանց եթէ ոչ բաժանումն ի Հոռմայ ... Սակայն յուսամք ի Տէր
որ զթասիրաբար թոյլ չպիտի տայ այսպիսի դժբախտութիւններուն, նա
որ մոլորեալ ազգին մէջ ուղղափառութեան գանձը պահեց դարուց ի
դարս, թէեւ հօտ փոքրիկ, բայց իրր աւանդապահ ճշմարտութեան, բա-
րոյական բարձրութեան, եւ հնազանդութեան առ Ս. Աթոռն Առաքե-
լապետին Պետրոսի, Փոխանորդին Բրիտոսի. ցորենի հետ որոմն ալ
աճած է, բայց ցորենը մնաց միշտ անկեղծ, հաց սուրբ ըլլալու համար
Բրիտոսի, հալածանքի կրակին միջոցաւ, ըստ բացատրութեան Ս. Իգ-
նատիոս աստուածագգեաց հայրապետի եւ մարտիրոսի. այո՛, հալածա-

նոց հանդերձ կաթողիկէ հայը Աստուծոյ չնորհքով պահեց իր հաւատոյ
դանձը, դարերով . իր ծոցէն ելած անհաւատարիմ զաւակներուն հաշա-
ծանքը չէ որ զայն պիտի անհետացնէ անճիտէ . Բրիտոս Աստուած պիտի
պահպանէ զայն իր Ս . Սրտին անհուն սիրովը կրկնելով այդ խեղճ հա-
սարակութեան համար եւս . «ԳՏԻ զԴաւիթ, այր բս սրտի իմում, որ ա-
րասցէ զամենայն զկամս իմ» (Գործ ԺԳ . 22) : Որով նա ո՛չ միայն պիտի
չմերձանայ տակաւ . հերձեալ էջմիածնականութեան , այլ յաւէտ անկէ
մեկունի՝ միշտ աւելի պիտի յարի առ Ս . Քահանայապետն Հռոմայ , որ
կ'պառաջնորդէ Ս . Պետրոսի փրկութեան նաւուն : Այս իմաստով ալ նա-
խախնամական է նոր տոմարի գործածութեան սկզբաւորութիւնը , որ
կ'արդարանայ նաեւ անով՝ որ Ազատամարտի (կամ Առաջամարտի) պէս
յայտնի անկրօն թերթ մը (թ . 1071) կը դատապարտէ զայն , իր կրօնա-
կան տգիտութեան մէջ «Յղութիւն Ս . Աստուածածնի» տօնը լատինա-
կան (! ?) տօն մը ըսելով :

Կը մնայ ուրեմն ճշմարիտ հայ-կաթողիկէ հաւատացելոց՝ Տեսնել
եւ զգուշանալ ի խմորոյ Սաղուկեցւոցն եւ Փարիսեցւոց (Մատթ . Ժ2 . 6) :

ԿԱԹՈՂԻԿԷ

Կ Ա Ք Ե Բ Ո Ր Ա Ձ Ղ

Ուրախութեամբ կ'աւետենք մեր պատուական ընթերցողներուն թէ Ամենապ . և
Փօրերջ . Հոգեւոր Տեառն տրամադրութեամբ և նոր զոհողութեամբ , յառաջիկայ 1943
տնորուն առաջին թիւէն սկսելով թերթիս բովանդակութիւնը պիտի աւելցնենք՝ հի-
մակուն չափով գրեթէ վեց էջ , անփոփոխ պահելով տասնութեց էջերու թիւը : Այս
յաւելումը պիտի ունենանք էջերը երկու սիւնակներու բաժնելով և անոնց ծաւալը
ընդարձակելով : Հետեւաբար նոր տարին պիտի սկսինք՝ աւելի ճոխ և առատ և աւելի
օգտակար նիւթերու բովանդակութեամբ և նոյն իսկ քաղաքական լուրերու յաճախու-
թեամբ ընծայել ընթերցողաց Կաթողիկէ Արձագանգը . և սակայն այսպիսի զգալի
բարեփոխութիւն մը բնաւ չպիտի ազդէ բաժանորդութեան գիներու վրայ , որոնք նոյն
կը մնան :

Միայն մեր պատուական ընթերցողներուն կը փութանք յիշեցնել ինչ որ Սրբա-
զան Քահանայապետին մերոյ Պոսի Ժ . Ի օրհնութեան շնորհագիծ նամակին աւթիւ-
քած էինք . « Քահանայապետական Օրհնութիւնը պէտք է քաջալերէ և խրախուսէ
նաեւ ընթերցողները՝ որոնց մասնաւորապէս կը շնորհուի , որպէսզի իրենք օգտուելով
հանդերձ , փոյթ տանին մեծաւ եռանդեամբ ծաւալելու Կաթողիկէ Արձագանգը անոր
օգուտն ալ որչափ հնար է , ընդհանրացնելու համար » :

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ռ Ո Մ Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Է Ա Շ Խ Ա Ր Հ

Ս. Քաջանայապետը մասնաւոր նամակով մը իր փոխտնօրդին՝ Կարդինալ Ռէս-բիկի ծանոյց թէ ինք հաւանելով հաստատած է Քրիստոնէական Վարդապետութեան այն դասագիրքը որ իր մասնաւոր հրամանաւ և սրբազրութեամբ իսկ երկար ժամանակէ ի վեր պատրաստուած է առ այս կարգուած աստուածաբաններէ. և Սրբազանը կը հրամայէ որ միւս քրիստոնէականները խափանուին, և ուսուցումը այսուհետեւ մի միայն այս նոր գրքովին ձրայէն կատարուին Հռոմայ թեմին մէջ:

*. Ս. Քաջանայապետը Դեկտ, 2ի Կարդինալաժողովին մէջ կարդինալ անուանեց զԱրհի. Կ. Հորնի, Եպ. Վէցբրիմի ի Հունգարիա: Մնած է ի Պուտարէշթ, ի 1840, և 1896ին Ֆրանց-Եռգէֆ կայսեր կողմանէ ընդունած է Այր ազաւս ժոն Հորնպուրկ տնտղոսը: Վատիկանու ժողովին մէջ գտնուած է իբր աստուածաբան լէր Արքեպիսկոպոս Կարդ. Իշխան Սիմիրի, վիճակաւորին Կրանի, Եղած է քրօֆէսթոր, դիւանապետ, Կրօնից Տեսուչ կառավարական շրջանակին մէջ: Իր քաջանայութեան յորելեանը կատարած է և իր եպիսկոպոսութեան 25ամեակին սկսած: Զարմանալի է իր հաւատարմութիւնն ու հպատակութիւնը առ Ս. Աթոռն. իր եռանդովն ծաղկած է իր թեմին մէջ օրինակելի բարեպաշտութիւն ամէն կողմ կանգնուեցան այլեւայլ բարեգործական հաստատութիւնք. իր անունը կապուած է Հունգարիոյ ամէն բարեսիրական և գիտական ընկերութեանց:

*. Վախճանեցաւ երկարժամանակեայ վաստակաւոր Մօնս. Լուիճի Քիէզա, Ս. Ժ. Տար. Հաւատոյ վասն արեւելեան դործոց առաջին քարտուղար: Հանգիստ կը մաղթենք իր հոգւոյն:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆ

Արհի. Գրեգոր Արքեպ. Գովբեկեան, Աբբահայր Միթմորեանց Վիեննայ, վերադարձած է Զմիւռնիայէ և մօտերս պիտի ուղեւորի դէպ ի Վիեննա:

*. Սիրայօժար ընդունեցանք Լուսաւալիղ վիմատիպ թերթին բացառիկ թիւը, որ կը տպուի ի Խարբուլթ Տնօր-Խմբ. ունենալով զՂ. Վ. Մ.: Արեւկան ձեռնարկը ի սրտէ կը շնորհաւորենք, ձեռնարկ՝ որ, ինչպէս գիտենք, հակառակ ամէն կերպ իրական դժուարութեանց. կը շարունակէ անձնանուիրարար, կրօնից և քաղաքակրթութեան իւրովաման ստատրիլու գիտումով: Երկար կեանք, գործունէութիւն և գլուխկարութիւն կը մաղթենք Լուսաւալիղին:

Մեծ. Գր. էֆ. Ոսկեանին հարցումներուն՝ հակառակ մեր բաղձանաց, չկրցանք պատասխանել ներկայ թիւով, առ անձկութեան տեղով, գալ թիւով միայն պիտի կարենանք պատասխանել:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Լոնտոնի մէջ Գշ.օր սկսաւ պատերազմող տէրութիւններու բանագնաց պատ-
ուիրակներուն գումարումը, Սէնթ-Ջէյմս Սրահին մէջ որ 50 մէթր երկայնութիւն և 20
լայնութիւն ունի, իսկ Դշ. օր նոյնպէս սկսաւ վեց մեծ տէրութիւններու դեսպաննե-
րուն ժողովրդի մօտոյ յայտնի կ'ըլլայ ասոնց բռնելիք ուղղութիւնն ու տալիք որո-
շողութիւնը, յորմէ կախում ունի հաշտութիւնը կամ պատերազմի շարունակութիւնը:

*. Բշ. օրը Տարաւանելի բացերը ծովային կռիւ մը տեղի ունեցած է Օսմ. և յունական
տորմիզներու միջև. «Աւերով»ը փաստւած է և յոյն տորմիզը ի փախուստ խուճապած:

*. Իսպիսպարաք պաշտօնական աղբիւրէ կ'իմանայ թէ Միտիլլիի օսմանեան զօր-
քերը փայլուն յաղթանակ մը տարած են Հելլէններուն վրայ:

*. Իմամ Եասէայի զօրքերը յաղթեցին Ալիս Իտրիսի զօրքերուն, անոնցէ գրա-
ւելով օտարամուտ բազմաթիւ թնթանօթներ:

*. Եանեայի կուսակալութեան կողմէ ներքին գործերու նախարարութեան հա-
սած հեռագիր մը կը ծանուցանէ թէ երեք օր շարունակ բուռն կռիւներ մղուած են
Թշնամի զօրքին հետ. որ գրաւած էր Եանեայի մօտ Քէնտօրօթ և Փլոտրիքօ կոչուած
վայրերը: Կռիւներուն հետեանքով մեծ կորուստներ տուած է Թշնամին, որ պարտուե-
լով ստիպուած է նահանջել: Թշնամիին պատկանող լեռնային հրետանի մը քան-
դուած է:

*. Երեսփոխանական քննութեանց մասին պաշտօնական ծանուցում. —
Թերթերու մէջ զազազան տեղեկութիւններ հրատարակուելու վրայ են երես-
փոխանական ժողովի ընտրութեան և գումարման թուականի մասին: Բնականաբար
ներկայ պատերազմը արգելք է ընտրութեանց կատարման հետեւաբար այս պահու-
անկարելի է ընտրութիւնները շարունակել: Շնորհիւ Աստուծոյ, հաշտութեան կրն-
քուսէն ետք երեսփոխանական ընտրութիւն կատարուելով՝ երեսփոխանական ժողովը
պիտի բացուի:

*. Պոլսոյ դիւանագիտական շրջանակներու մէջ կը հաւաստուի թէ ֆրանսական
կառավարութիւնը առաջարկ ներկայացուցած է տերութեանց՝ Սելանիկը միջազգա-
յին քաղաքի վերածելու համար, կ'ըսէ Առաջամարտ:

*. Երեւակ Զինակցութեան պատկանող տէրութիւնք որոնք նշանակելի խորհրդով
մը վերջերս նորոգեցին իրենց դաշինքները, կը պնդեն Ալպանիոյ անկախութեան և ջե-
զոքացման: Աւստրո Հունգարական կառավարութեան մէկ առաջարկին վրայ դեսպան-
ները Լոնտոնի մէջ գումարուած ժողովին մէջ պիտի վիճարանեն այս խնդրին շուրջ:
Կ'երեւի թէ ասով Սերպիոյ Ալպանիոյ մէջէն դէպի Ադրիական ունեցած անցքի մը
պահանջները ինքնին ջուրը կ'իյնան:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Նոր Տումարի Կոնդակին սանկ . բարգամնութիւնը	729
Աւեսարանի մեկնութիւն	734
Արգիլեալ թերթին անհեղեղ մեկ յօդուածը	736
Կարեւոր ազդ	742
Տեղեկագրական	743

ԱՐՏՕՆԱՏԵՐ
ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՆԳՐԱԳԵՏ
ԳԵՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Արձագանգ Շաքարաբերի, Բէրա, Պայրամ փողոց բիւ 6 Կ. Պոլիս

Թերթիս երկրորդ տարին պիտի աւարտի յառաջիկայ Դեկտեմբեր 31ին, ու երրորդ տարւոյն պիտի թեւակոխէ 1913 Յունուար 1ին, աւելի խնամուած եւ աւելի ճոխ բովանդակութեամբ:

Բաժանորդագրութեան պայմաններն անփոփոխ կը մնան. հետեւապէս կը հրաւիրենք փութափողները որ փութան բաժանորդ գրուիլ մինչեւ ց1 Յունուար: Իսկ անոնք որ արդէն գրուած են, իրենց պայմանաժամը չլրացած կը պարտին նորոգել իրենց բաժանորդութիւնը:

Պատե՛հ առիթ կը ներկայանայ մեզ հրապարակաւ յայտնելու մեր խորին շնորհակալիքն ամէն այն բարեացակամ անձերու, որոնք այս տարուան շրջանին մէջ հանեցան գրաւոր թէ բերանացի թերթիս նկատմամբ իրենց դուռնաւոր զոհունակութիւնն, խնդակցութիւնը եւ նոյնին շարունակութեան համար խրախոյս եւ մաղթանքներ յայտնել: Կը վստահացնենք զիրենք որ բնաւ պիտի չխնայուի ու եւ իցէ զոհողութիւն՝ այս գերազանցապէս լուրջ եւ հաստատ կաթողիկէ սկզբունքներու ծառայող թերթս միշտ աւելի օգտակար ընծայելու մեր սիրելի հասարակութեան: Կը խնդրուի փոխադարձաբար մէն մի նշմարիտ կաթողիկէ անհատ իւրովսանն աշխատիլ *Արձագանգի* ծառայութիւնը:

Հրատարակուեցաւ «Ճարտական սկզբունք Բրիտանական Վարդապետութեան, փոքրիկ տղայից համար, հաստատելու Հոգեւոր իշխանութեան եւ կիրառութիւնը հրամայեալ Հայ-Կաթողիկէ հասարակութեանն ամեն դպրոցներուն մէջ»: Կցուած են առօրեայ հարկաւոր աղօթքները: Բաղկացած է 136 էջերէ:

Բովանդակութեան լուրջ, սեղմեալ եւ պարզ ոճոյն շնորհիւ դպրոցականներու ամենեւնի օգտակար եւ յանձնարարելի գրքոյկ մըն է անհրաժեշտ:

Դիմը անհամեմատ կերպով աժան է. ամուր թղթակագմբ՝ 2 դահեկան միայն:

Դիմել՝ Կ. Պոլիս, Բերա, Պալատ փողոց թիւ 5:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Բարձրագույն համար սարեկան	Ինկն, արժ	40
Աղայանայ	» »	20
Արսաւանան	Տարեկան	10
Աղայանայ	»	5

Բաժանորդագրութիւն կանխիկ կը վճարուի Մանս Բասով
 և կամ մէյ մէկ դրոշմոց (համապատասխան)

Մէկ թիւ 4 Դահլիճակ

Նշանակ: յօդուած եւն. կը դրկուի խմբագրութեան հասցէին

Կ Ա Ք Ո Ղ Ի Կ Է Ա Ր Ձ Ա Գ Ա Ն Գ

Բերս, Պայրամ փողոց թիւ 5

Կ. Պոլիս

KATOGHIGHE ARZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ՆՍՆՈՒ. — 1.— Արձագանց կը ցրատակուի Եւրոպ' ծերք:

2.— Խմբագրութիւն պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնու-
 րեալը ցրատակել իրեն դրկուած ու եւ է յօդուած:

3.— Կեղծանունով դրկուած յօդուածներու հեղինակը կը պարտի
 իր իսկական անունը ծանուցանել Խմբագրութեան:

4.— Ձեռագիրներ եւ չեն դարձուիր:

5.— Եօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած իրական բնութիւն
 մէկ կողմը միայն:

6.— Եւրոպայանց համար մասնաւոր փողոց համագրութիւն չկը կաւ
 տարուի:

7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է անհրաժեշտ երկու
 դահլիճակի համապատասխան ի միասին դրկել: